

# ՅԱԻԵԼՈՒԱԾ

«Արարատ» ամսագրի 1913 թուի հոկտեմբերի համարի.

ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ  
ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՅՐ ԱԹՈՂ Ս. ԷՉՄԻԱԾՆՈՒՄ

Պարտիականից բաժականմէ կ լինելով պետք է վերջին  
անհայտ ունակութիւն՝ **ՇԱՀՈՒՐԴ ԳԱՅՑ** այս պատճենը  
եղակ է կամ կարգավոր է առաջ է շնորհիւ:

Եաւուակ առ կոյրելի է որ Տեսադր Փար Ազրակ  
պատճեն պահպան մուգ թերթ կարամնա չարտավայր  
հանգանակոր: որ Խառնակ յիշոց պատճենպերից Ականոց  
տեսակին յէ Աշում Ազրուր մինչդեռ Թ: Արծրունին  
որ ոյթքուն յակախ յիշում է Մրձրանիներին պատճենակայ  
զաւանեերը անուն անուն և բառ զանազանմէ է Ազրուր  
Մէծ Ազրակ Փար Ազրակը թէ ան յիշում Պատճենը  
ինչ Անդամանես հաթափեար թէ յիշում է կոդիս և  
Ալլորուրը (Յանը Ի՞ն. 156: կց. 441: ԱՅԲ. 69: 133:  
բայց առ է անջան թիյուր և Թ: Արծրունին մինչ  
Ալլորուր անուն հանդառամ և Մէծ Ազրակը թէն վեր  
ընկ անք և Մէծ Ազրակ կոչումը (Կուսանու) 69: 64:  
5: 89:

Ա. Կախոյեան

**ԺԱՄՎԱՐՄԱՐ ԱՅ ՎԵՐԱՎՐ ՎՎԵՎՎ ՑԱՏ**

**ՎՃԱՑՄԱՋ ՄԵՍ ԺՎԵՎՔՎՄՄԱԼ:**

**ՎՃԱԳԱՎԱՄՄԱՋ ԱՅ ՎԵՐԱՎՐ**

**ԱՎԱՐԱՄՄԱՋ Ա. ԱՅԱՋ ՎԵՐԱՎՐ**

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱԽՈՐ ԿԱՅՍԵՐ նեռազիրը  
յանուն Վեհափառ Տ. ԳԵՂԻՔ Կարուղիկոսի Ամենայն  
Հայոց ստացուած նոկտեմբերի 14-ին:

Ճնորհակալ եմ Զեղանից և յանձնաբարում եմ  
հաղորդել տօնակատարաթեան բոլոր ներկայ  
եզրակացներին էջմիածնում եմ շնորհակալութիւնը՝  
ազօթքների և ինձ արտայայտուած հաւատարիմ  
հպատակութեան զգացմանց համար:

### Ն Ի Կ Ո Լ Ա Յ :

Այս հեռագիրն ստացուած է ի պատասխան Նորին Վեհա-  
փառութեան Թագաւոր Կայսեր ուղղած հետեւալ հեռագրի.

Լ Ի Կ Ա. Դ Ի Ա.

### Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր.

Հայաստանում քրիստոնէական լուսոյ հիմնադիր երա-  
նելի ս. ս. Սահակի և Մեսրոպի ձեռքով կատարած հայ  
գրերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-  
ամեայ տօնակատարութիւնների հանդէսին էջմիածին ժո-  
ղովուած ներկայացուցիչները կրթական ու բարեգործական  
հաստատութիւնների և հայ ազգի բոլոր խաւերի Նախա-  
մեծար Սթոռի Տաճարում ազօթելով իմ և ամբողջ միա-  
բանութեան հետ Զերդ Կայսերական Մեծութեան և համայն  
Շգոստավոս Տան առողջութեան և բարօրութեան համար,  
արկանեն առ ոտո Զերդ Մեծութեան իւրեանց անսահման  
սիրոյ, երախտագիտութեան և հաւատարիմ հպատակու-  
թեան զգացումները:

Թող Տէրը յարատեէ Զեր կեանքը ի մեծ փառս քրիս-  
տոնէական եկեղեցւոյ և ի բարօրութիւն Մեծին Ռուսիոյ Տ. ԳԵՂԻՔ Կարուղիկոս Ամենայն Հայոց

Անորին Պայծառափայլութեան Փոխարքային Կովկասու-  
հայ ազգի բոլոր խաւերի ներկայացուցիչները, որոնք  
ժողովուել են հայ գրերի 1500-ամեակի յոթենական հան-  
դէսին, խնդրեցին ինձ արտայայտել Զերդ Պայծառափայ-  
լութեան իրենց խորին յարգանաց զգացումները և բարե-  
մաղթութիւնները Զեր կատարեալ առողջութեան համար,  
որպէս զի կարող լինէք այսուհետև ևս երկիրը վարել խա-  
ղաղ կուլտուրական զարգացման շաւզով:

Յայտնում եմ նաև, որ Նորին Մեծութեան Թագաւոր  
Կայսեր մատուցի հայ ժողովրդի ներկայացուցիչների հա-  
ւատարիմ զգացումները:

**ԳԵՐԻԴ Կաթողիկոս Ամենայն Հայոց**

14 հոկտեմբերի 1913 ամի.

Ա. Էջմիածին: Առաջ մազարձն մվաճ

S. Փոխարքայից ստացուել է հետեւեալ հեռագիրն Ռուսովից  
(Թիֆլիս վերադառնալիս) հոկտեմբերի 15-ին.

**Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն**

Նորին Մրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Ենորհաւորութիւնս եմ մատուցանում Զերդ Մրբու-  
թեան հայ գրերի 1500-ամեակի տօնի առթիւ և խնդրում  
եմ Զեր և Էջմիածնում գտնուող ժողովրդական ներկայա-  
ցուցիչներին ընդունել իմ խորին շնորհակալիքն այն բարի  
վերաբերմունքի համար, որ ունիք դէպի ինձ: Մրտանց  
զգացուած եմ:

Կոմս Վորոնցով:  
Բոլոր միավորներ սովորուած Ք. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.



Ա. Էջմիածնի Յորելեանական Յանձնաժողովը ամեն միջոց ձեռք էր առել՝ տօնն ըստ արժանւոյն շքով ու հանդիսաւու րութեամբ կատարելու, տպագրւել էին կոչեր, յայտարարութիւններ հայ լրագրերում, զիմումներ էին եղել զանազան հառարակական հաստատութիւնների ու հիմնարկութիւնների պատգամաւորներով ու ներկայացուցիչներով մասնակցելու, տպագրել և ցրել էին նուև Մեծ Յորելեանի տօնակատարութեան կարգը, որպէսզի հեռու վայրերից եկողները հնարաւորութիւն ունենան ճիշտ ժամանակին տեղում լինելու Այսպիսով, Յանձնաժողովի յայտաբարութիւնների ու կոչերի հիման վրայ՝ հոկտեմբերի 11-ին, ուրբաթ առաւօտից, պատգամաւորներն ոկոնցին հետզհետէ ժողովւել և Էջմիածին։ Ճեմարանում ու վանքի հեւրանոցում հարկաւոր պատրաստութիւններ էին տեսնաւած ընդունելու հայ ազգիներկայացուցիչներին, Էջմիածնի ցանկալի հիւրերին։ Զարդարւած էին վանքն ու Ճեմարանը դոյնզգոյն էլեկառական լապտերներով, զրօշակներով, թարմ ոստերի և ծաղիկների հիւսերով։ Ա. Մեսրոբի և ս. Սահակի մեծագիր նկարները անհրաժեշտ շուք ու գեղ էին ընծայում վանքի զանգակատան արևմտեան երեսին, տեղ տալով իսկենց մէջ զոյնզգոյն լապտերներով կազմած Հայրապետական թագ ու գաւաղանին։ Հարաւային և հիւսիսային կողմերը զանգակատան կրում էին Մեծ Տօներին սովորական «Աստ էջ Միածին, հիմն արկ Տաճարին» և «Ազգային այս տուն կացցէ հաստատուն» մակագրութիւնները։ Վեհաբանի մուտքի ճակատին դրւած էր Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Ե-ի նկարը։ Մի առանձին կենդանութիւն, կեանք էր ստոցել Էջմիածինը, մանաւանդ որ հետաքրքրւող հիւրե ու հանդիսականների ահազին ըազմութիւն էր հաւաքւել տեսնելու պատգամաւորներին, ներկայ լինելու Ազգային Մեծ Յորելեանին և զւարճանալու Ազէքսանդրապոլից հսաւիրած զինւորական երաժշտական նւազախմբով։ Մի ջերմ զգացմունքով համակւել էին ըուորի, պատգամաւորների թէ հանդիսատես հիւրերի սրաերը, ոխն ու ատելութիւնը առժամանակ տեղի էին տւել, չքացել և տարբեր համոզումների, հայեացքների տէր պատգամաւորներն մօտեցել էին իրար։ Պատգամաւորներ եկել էին ոչ միայն Կովկասից, այլ և Առևսաստանից, Տաճկառանից, Պարսկաստանից, Անդլիայից, զանազան ընկերութիւններից, հասարակական հիմնարկութիւններից ու հաստատութիւններից, կային պատգամաւորներ նաև հայ աւետարանական ու հայ կաթոլիկ համայնքներից, նոյն իսկ ուստ և թուրք պատգամաւորներ։

## ՊԱՏԳԱՄԱԻՐՆԵՐՆ ԷՒՆ

### Ազգանուն—անուն ո՞րտեղից կամ ո՞ւմ կողմից

1. Արեղեան Մանուկ Պօլսի հայուհեաց ընկ. և թոխատի վիճ.
2. Արիեան Կարապետ Ատրպատականի թեմական խորհրդի
3. Ազատեան Անուշաւան Շնոր Մամուլք և Քալարադիւղի հասար.
4. Ալթունեան Գէորգ Ախալքալաքի Յորել, յանձնաժ. թեհրանի հայ գաղ, և Մոսկվայի հայ ուսանող.
5. Ալիբէկեան Տիկին Կովկասի հայոց որբախնամ ընկերութ.
6. Ազարաբ Յակոբ Աղեք, Կովկասի միութեան կանանց ճիւղի
7. Ամիրխանեան Յովսէփ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան
8. Առաքելեան Արամ Բագուի դպրոցների հոգաբարձութեան
9. Առաքելեան Համբարձում Սահման, ուսմկան ու առաջարկութեան համար և ամսկ. կուռ. Վասպուր. Ակումբի և «Վան-Տոսպ» շաբաթաթերթի, Պօղոս փաշա Նուպարի, Պօլսի հայոց միացեալ ընկ., Ղարաբաղի թեմ, դպ, և «Մշակի» ու «Երօր»-ի
10. Առաքելեան Աղէքսան, Բագուի հայոց հասարակութեան
11. Արարեան Գէորգ Ախալքալաքի ո. Փրկիչ եկ. ծխ. հոգաբար.
12. Արզութեան Իշխան
13. Աւետիք. տ. Համասփ. Վաղարշապատի հայոց քարեգ. ընկեր.
14. Աւետսեան Մարդար Նոր-Յայեալղետի ծխական դպրոցի
15. Աֆրիկեան Խաչատուր Տիլիտիսի հայ վաճառակ. և Տիլիտիսի հայ. աղգագր. ընկերութեան
16. Բարդէն վարդապետ Շուշու հասար, հոգեոր, և Տ. Զաւէն վար.
17. Բագրատ եպիսկոպոս Ասրիղամիշի հայ հասարակութեան
18. Բայսօղլեան Ա. Կովկասի հայուհեաց որբախն. ընկեր.
19. Բզնունի Խաչատուր Կարսի ո. եկեղեցու. հոգաբարձութեան
20. Բոզարջեան Արշակ Տիլիտիսի հայ վաճառականների
21. Բողգանեան Բ. Տիլիտիսի բորսային կոմիտետի
22. Գարեգին վ. Յովսէփ, «Հովիտ»-ի խմբագրութեան
23. Գէորգ վ. Զէօրելեան Նոր-Նախիջեան, բարեգ. ընկ, նախադպ. հասակի երեխայոց նպաստող ընկ. Ռոստովի Խզմիրլեան ընկ. Կարսի վիճակի և հոգեոր. և Տիլիտիսի հայ եկեղեց. ընկ.

24. Գիւլպէնկեան Սերով. Տփխիսի հայ վաճառականների  
25. Գուլամիրեան Արդար Երեանի «Ալրիմեան» գպրոցի  
26. Գրիգորեան Գրիգ. ա.ք. Բագուլի հոգեորականութեան  
27. Երամեան Համբարձում Վանի դպրոցների  
28. Եւանգուլնան տիկ. Շուշ Կովկ. կանանց ընկ. Աղեքս. ճիւղի քաղ.  
շանիկ օր. կար ու ձեի գպրոցների մանկավարժ.  
կազմի և «Ալրիմեան աշակերտախն. ընկ.  
29. Եփրեմ Խպիսիրոպս Սուխումի շրջանի հայ հոգեորականութ.  
30. Զաքարեան Հմայեակ Վաղարշապատի եկ. ծխ. դպ. հոգաբարձ.  
31. Զբորչիկեան Արշալոյս Կարսից  
32. Եհրամձեան Յակոբ Աղեքսանդրապոլի Արզութեան օր. դպ.  
33. Թաբաղեան Սաղաթէլ Աղեքս. ս. Լուսաւ. եկ. և «Ալրիմեան» դպ.  
34. Թաղէռսեան Եղիշէ յատուկ հրաւիրուած  
(Նկարիչ)  
35. Թաղէռսեան Տիգրան Տփխիսի Գայեաննեան օր. գպրոցի  
(բժիշկ)  
36. Թառայեան Խսահակ Բագուլի հայ լուտերական համայնքի.  
37. Թառայեան պատւական Բագուլի հայ աւետարանական համայն.  
38. Թորոսեան Սահակ «Հասկեր» և Մոսկվայի ուսանողութ.  
39. Իլիւշին (առւ) Բագուլի քաղաքային ինքնավարութ.  
40. Խստհակեան Կարապետ Աղեքսանդրապոլի մեջանների  
41. Խսրայէլեան Սարդիս Երեանի օգտակար գիտելիք. տար. ընկ.  
42. Լևոն վարդապետ Գանձակի հայ հասարակութեան  
43. Խալաթեան Կ. Կովկ. հայոց բարեգործական ընկերութ.  
44. Խատիսեան Գէորգ Տփխիսի բորսային կոմիտետի  
45. Խզմալեան Թաղէռս Երեանի թեմի հայոց եկ. ծխ գպրոցների  
46. Խուզաբաշ. Համազասպ Երեանի հայոց բարեգործական ընկ.  
47. Խօջամիրեան տիկին Կովկ. հայոց որբախնամ ընկերութեան  
48. Ծովեան Բագուլի դպրոց. հոգեբարձութեան  
49. Կանայեան Ստեփան Պօլսի հայուհեաց ընկերութեան  
50. Կոստան. տ. Վարդապէ Վաղարշ. հայոց բարեգործ. ընկերութ.  
51. Կուսիկեան Կարապետ Լալ. ձեմար. և Մոսկվայի հայ. եկ. խորհ.  
52. Հախումեան Աշոտ Մոսկվայի հայ ուսանողութեան  
53. Համբարձում. Աղեքս. Աղեքսանդր. Խանականուշեան օր. դպր.  
քաղաք. օր. կար ու ձեի դպ. և «Ալրիմեան»  
աշակերտախնամ ընկերութեան  
54. Հերիմեան Խոփայէլ Աղեքսանդրապոլից  
55. Զամոյեան Գրիգոր Կարսի հայոց եկ. ծխ. դպր. հոգաբարձ.  
56. Մալխասեան Ստեփան Տփխիսի Յովեաննեան. Գայեան. օր. դպր.  
57. Մահմուդքէկով(թուրք) Բագուլի քաղաքային ինքնավարութեան  
58. Մանելեան Մ. Վաղարշապատի հայոց բարեգործ. ընկ.

59. Մանեկեան Ա. Տփխիսի բորսային կոմիտետի  
60. Մարդարեան Մարտիր. Երեանի Զօրաւոր եկ.- ծխ. հոդաբարձ.  
61. Մանդակունի Գր. աւ.ք. Տփխիսի քահանայութեան  
62. Մարտիր. աւ. Հայլկան. Տփխիսի հայ ազգագրական ընկերութ.  
63. Մարտիրոսեան տիկ. Աղեքս. Կովկ. միութ. կանանց ճիւղի  
64. Մարտիրոսեան Մնաց. Տփխիսի հայ վաճառականների  
65. Մելքոնեան Սարգիս. Կովկ. հայոց բարեգործական ընկերութ.  
66. Մէրունութեան Միք. Բաթումի բարեգործական ընկերութ.  
67. Միլեան Արշակ Տփխիսի հայ վաճառականների ովետ  
68. Միրզայեան Սերովրէ Բագուր հայ լուսերաւական համայնքի  
69. Մկրտչեան Մկրտիչ «Պատոնի» ալմանախի  
70. Մոճոսեան Պետրոս Աղեքս. «Ախուրեան» օրաթերթի  
71. Յարութիւնեան Իսահ. Ենթասիսեան զպր. մանկագարժ. կազմից  
72. Յովհաննիս. Յովհաննէս Բաղուրի քաղաքային ինքնավարութեան  
73. Նազարբէկ. Զաքարիա Ատրպատականի թեմական Խորհրդի  
74. Նազարեան Տիգրան Ղարաբաղի թեմի ծխ. դպր. միջազգային  
մամուլի բիւրոյի, գեղազիտ. սալօնի և  
«Ազրիւր-Տարագի» խմբագրութեան  
75. Նախշաբեան Սարգիս Աղեքս. ա. Լուսաւ. եկ. «Արխմեան» դպր.  
76. Նախշունեան Գրիգոր Տփխիսի հայ վաճառականների  
77. Ներսէս վարդ. Տ. Միք. Ախուրյացի վիճ. և Դերբենդի հայ համ.  
78. Շահողիդ. Վաշաղան Աղեքս. քաղաք. տարրական գպրոցների  
79. Զաթալբաշ. Սերովրէ Ե. Նախիջնանի եկեղեց. հոգաբարձութ.  
80. Զմէկեան Մակար Տփխիսի մեջանների  
81. Զամալեան Արշակ «Հորիզոնի» խմբագրութեան  
82. Ակիզեան Գէորգ. Նոր-Եամինի ջեմական դպրոցի  
83. Ատհակեան Սահակ քն. յատուկ հրաւիրուած  
84. Սաղթէլեան Միհրան Ախալցխայի ա. Փրկիչ եկ.- ծխ. հոգաբարձ.  
85. Սարգսեան Սարգիս «Ամառլի» ծխական դպրոցի  
86. Սկիերեան Գէորգ. քահ. Արմաւիրի հայ գպրոցների  
87. Խուլիսան Սաւելիան Տփխիսի հայ վաճառականների  
88. Վարդանեան Աստուած. Եորագաւթի և Թագա գիւղի գպրոցների  
89. Տարախչեան Հմայեակ «Ասպարէկո» խմբագրութեան  
90. Տ. Ասամուրեան Կոստ. Շամախու հայ աւետարանական համ.  
91. Տ. Ասամուր. Մարգար Տփխիսի հայ աւետարանական համայն.  
92. Տ. Գրիգորեան Ռուբէն Տփխ. վահեց. և Գիւլազարակ գիւղ. հաս.  
93. Տ. Ղազարեան Համբար. Աղեքս. ա. Փրկիչ եկ.- ծխ. գպրոցի  
94. Տ. Ղեօնդ. Վարդան քն. Տփխիսի քահանայութեան  
95. Տ. Մարտիրոսեան տիկ. Աղեքս. Սահականուշեան օր. գպրոցի  
Եատամլիա  
96. Տ. Մարտիրոսեան տիկ. Կովկ. կան. ընկեր. Աղեքսանդ. ճիւղի

97. Տ. Միքայէլեան Հայկ Բաղուի հայոց մարդասիրական ընկերութեան վերին  
98. Տ. Յակոբեան Յակովը Վերին Ազուլիսի բարեգ ընկ ձիւղիք ու Թռվմա տառք վանքից հոգ ծխ դպր և տեղական յորելինական յանձնաժողով  
99. Տ. Պօղոսեան Աւետիք Աղեքս Արդութեան օր դպրոցի  
100. Տ. Պօղոսեան Մամր. ք. Օշականի ա. Մհարովը եկեղ հոգաբարձ  
101. Տ. Ստեփանեան Գար. Աղնախի հայ ծխ դպր և բարեղօրձ ընկ  
102. Տ. Ստեփանեան Գէորգ Աղնախի բարզծ ընկ և Տփիխի Յովիան նեան Գայեանեան օր դպրոցի  
103. Տէրտէրեան Համբարձ Աղեքս ա. Փրկիչ եկ ծխ դպրոցի  
104. Բաֆֆի Արամ Լանգոնի հայ գալութիւնի միացեալ ընկ  
105. Փուղինեան օր Կովկասի հայոց որբախնամ ընկ  
106. Քալանթար Աղեքսան Պօլսի հայոց միացեալ ընկերութեան  
107. Քելէ Շահին Գէորգ ք. Նոր Նախիջ Գոգոյեան դպր մտնիավճ կազմի և Նախիջ եկեղեց հոգաբարձ  
108. Էղիկան Գուրզէն Մողղոկի դպրոցի
- Ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել ներկայ դտնւել  
109. Թօլուխանեան Մարկոս Շուշու դպրոցների հոգաբարձ կազմից  
110. Մելիք Ազարեան Ալեքս Պօլսի հայոց Միացեալ ընկերութեան  
111. Նաւասարդ Բագրատ Վանի հայկ Բարեսիրական ընկ  
112. Վուամիան Ա. Կարնոյ ազգային իշխանութեան և երիտասարդութ կողմից

Յոքելեանական Յանձնաժողովը պատգամաւորներին զիւրութիւն ընձեռելու և դանաղան անախորժ թիւրիմացութիւններից զերծ պահելու համար՝ նախ պատրաստել էր տոմսեր, Կարդաղին Յանձնաժողովի նախադահ Տ. Մուշէ վրդի սառը բարերութեամբ, որոնցով պատգամաւորները և թղթակիցներն ու հեւրերը կարող էին ազատ մուտք ունենալ դասախոսութիւնների, հանդէսների ու ճաշկերոյթների և երկրորդ ազագրել ու բաժանել էր պատգամաւորներին «Կարդաւորութիւն Համազգային Յոքելեանի տօնտկատարութեան և Աջմիածնութեամբ» թերթիկը, ուր մանրամասն, ժամ առ ժամ, նշանակւած էին պատարագը, հսդ եհանդիսութ դէյք, դասախոսութիւնը, թէյք, սուրճը, ճաշը և այլն:

Հանգէսն սկսւեց հոկտեմբերի 11-ին, ուրբաթ օրը, երեկոյեան 4 $\frac{1}{2}$  ժամին. վանքի դանդակների տօնտկան դօղանակնը դէպի վեհապահութիւնը հանդիսաւոր թափօրով, շրջապահութիւնը հորին Աեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով, շրջապա-

տամաք Մայր Աթոռի ամբողջ միաբանութեամբ ու պատգամաւորներով, ամպհովանու տակ, որը բռնել էին պատգամաւորները, բուրփառի անուշահստութեան և շարականի քաղցր հնչիւնների ուղեկցութեամբ իջաւ Մայր Տաճար՝ անցնելով ձեմարանի աշակերտութեան և խուռն բազմութեան շարքերի միջով։ Աւուր պատշաճի ժամերդութիւնից և Թարգմանչաց յիշատակին կատարած նախատօնակից յետոյ՝ նորին Սրբութիւնն առաջնորդուեց վեհաբան՝ պատգամաւորներն էլ ցրւեցին՝ թէյից յետոյ ժողովւելու և ազգային-հասարակական հարցերի շուրջը խորհրդակցութիւն ունենալու նպատակով։ Ժողովը տեղի ունեցաւ նորակառոյց մատենադարանի պատկերասահում, ներկայ էին նաև ո՛չ պատգամաւոր հիւրեր, որոնք եկել էին լաելու ազգի ներկայացուցիչների կարծիքները օրւայ հրատապ հարցերի մասին։ Պ. Հ. Առաքելեանը կարդաց Պօղոս Նուպար փաշայի ու զարկած զեկուցագիրը Հայկական հարցի մասին և ապա Բագւի Մարգասիրական ընկերութեան պատգամաւոր պ. Հ. Տէր Միքայէլեանի նախագահութեամբ և ներսինեան դպրոցի մանկավարժական կազմի պատգամաւոր պ. Ե. Յարութիւնեանի քարտուզարութեամբ ոկուեց խորհրդակցութիւն մի քանի այժմէական ընոյթ կրող խնդիրների մասին։ Խորհրդակցութեան կենտրոնը կազմում էր գպրոցական ֆոնդը, նրա կազմակերպութեան, գործադրութեան եղանակի խնդիրը, աւելորդ չեմ համարում յիշել, որ պատգամաւորների մեծ մասը կողմնակից էր ժողովրդի մասնակցութեան ֆոնդի թէ կազմակերպութեան և թէ գործադրութեան խնդրում։ Պակաս հետաքրքրութիւն չեր ներկայացնում նաև վերջին օրերը, արդէն հասարակութեան ոեփականութիւն դարձած, յարուցւած ծխական դպրոցի ուսուցիչների հարցը։ Ժողովը փակւեց, ընտրելով երկու մասնախումբ, որոնցից մէկը պէտք է զբաղւէր յատկապէս յիշածու ուսուցչական խնդրով, միւսը՝ շնորհակալութիւն մատուցանէր նորին Վեհափառութեանը պատգամաւորներին արած սիրալիր ընդունելութեան համար և հեռագիր-ողջոյն խմբագրելու Պօղոս Նուպար փաշայի անւան։ Պատգամաւորները ցըւեցին բարձր տրամադրութեամբ՝ պատրաստելու հետեւալ օրը մեկնելու օշական։

Հրաշալի ուխտերթ . . . Հոկտեմբերեան արեգակի զբաւիչ ճառագայթները մի անուշ ջերմութիւն էին սփռել հինաւուրց պատգամական Արարատեան դաշտի վրայ. ախորժելի մեղմ ու շոյիչ օգը բազմաթիւ ուխտաւորներն ու հետաքրքիր հանդիսատեսներ էր զբաւել դէսի օշական. հանապարհը տօք

նական տեսք էր սուացել. հետաքրքիր էր գիտել մանաւանդ աշակերտ-աշակերտներին սայլերի, ֆուրդօնների վրայ և սորով ուսուցիչ ուսուցչուների առաջնորդութեամբ; Ահա և նորին Վեհափառութիւնը իր ջըախմբով...

Օշականի փոքրիկ եկեղեցին գլուխների ծով էր ներկայացնում. որքան սրտեր էին թրթռում, որքան ըերաններ օրհնում Մեծ երախտաւոր ո. Մեորոքի յիշատակը: Պատարազին երգում էր ձեմարանի քառաձայն խումբը մասնակցութեամբ երգիչ պ. Տ. Նալբանդեանի և ղեկավարութեամբ պ. Ա. Տէր Յովոէփեանի: Պատարազից յետոյ կատարւեց հոգեհանգիստ և ապա Նորին Վեհափառութիւնը շրջապատաժ հոգեորականներով և պատգամաւորներով առաջնորդուեց եւ կեղեցու հարաւային դաւիթը, ուր տեղ էր պատարաստաժ նորին Սըբութեան, հոգեորականութեան, պատգամաւորների ու ճառախօսների համար: Գաւիթը, դպրոցի պատշպամը, նոյն իսկ տանիքը լցւած էր հոծ բաղմութեամբ. ծառերն անգամ ստիպւած էին հիւրընկալել շատերին հետաքրքիր տմբոխից, մանաւանդ որ բացի էջմիածնից՝ շրջակայքից ևս ահագին ժողովուրդ էր լցւել Օշական. հետո միմիայն աշակերտառութիւնը Աշաբարակից, Պարպիեց և այլն ահագին թիւ էր կազմում: Կազզ պահելը շափաղանց դժուար էր. և ով իրաւունք ունէր Մեծ Յոբեկեանին արգելելու մարդկանց իրենց որտի մաքուր զգացմունքները արտայայտելու Մեծ մարդու շերիմի առաջին. ով թոյլ կը տար իրեն արգելելու հայ մանուկին, հայ պատանուն իր որտի խորշերում երախտագիտական ցողերով ոնուցած ծաղկեկներից պսակ կազմելու և նւէր ըերելու Մեծ Վարժապետի դերեկայանին:

Հանդէսն ոկուեց. Նորին Սըբութիւնը զրւատեց ո. Մեորոքի և ո. Սահակի ու նրանց շաւզով ընթացողների, նրանց գործը շարունակողների ազգօգուտ գործունէութիւնը, օրհնեց նրանց յիշատակը: Ապա օվացիաների, ժափահարութիւնների ուղեկցութեամբ մէկ-մէկ առաջ եկան պատգամաւորները և գրւատեցին, գովեցին ո. Մեորոքի և ո. Սահակի գործերը և օրնեցին նրանց յիշատակը: Հայ ժողովրդի իզձերն ու ցանկութիւններն էին թափ առած զուրս լիժում այդ օրը եւը ընտրեալների բերանով. հայ ժողովուրդն էր իր երախտագիտական. ջերմ զգացմունքներով ողողում Մեծ Պարզկանց — ո. Սահակի ու ո. Մեորոքի յիշատակները հետեւել պատգամաւորների միջոցով.

Ազգանուն—անուն

1. Արեան Կարապետ  
2. Ալբունեան Գէորդ  
3. Աղաբար Յակոբ  
4. Ամիրիստնեան  
5. Առաքելեան Հ.  
6. Գէորդ Վարդ. Չորեքչ.  
7. Գրիգորեան Գր. աւ. ք.  
8. Երամեան Համբարձում  
9. Թարեւսեան Տ.  
10. Թորոսեան Սահակ  
11. Իսրայէլեան Ասրդիս  
12. Լեռն Վարդապետ  
13. Խզմալեան Թաղէսոս  
14. Լուսինեան Կարապետ  
15. Մալխասեան Ատ.  
16. Մահմուդրէկով  
17. Մանզակունի Գր. աւ. ք.  
18. Մելքոնեան Մարգիս  
19. Միլեան Արշակ  
20. Միրզայեան Մերովք  
21. Յովհանիսեան Յ.  
22. Նազարեան Տ.  
23. Ներսէս Վար. Տ. Միքայլ  
24. Զմէկեան Մակար  
25. Զամալեան Արշակ  
26. Ռէիզեան Գէորդ  
27. Տէր Ասատորեան  
28. Տ. Գրիգորեան Ռուբէն  
29. Տ. Յակովբեան Յակովը  
30. Բաֆիի Արամ

ո՞րտեղից կամ ո՞ւմ կողմից.

- Տիխիսիսի հայ որբախնամ ընկերութեան  
Ախալքալաքի հայ հասարակութեան  
Տիխիսիսի հայոց եկ. ծխ. դպրոցների  
Ներսիսիան դպրոցի  
Պօլսի միացեալ ընկերութեան  
Ե. Եախիջեանի բարեգործ. ընկ. նախա-  
դպրոց. դաստ. նպատառզ ընկ., Խճառ-  
ակմիրլեան ընկ., Կարսի հասարակ. ու  
հոգե. և Տիխիսիսի հայ երաժշտ. ընկեր.  
7. Գրիգորեան Գր. աւ. ք. Բագուի քահանայութեան  
8. Երամեան Համբարձում Վանի հասարակութեան  
9. Թարեւսեան Տ.  
10. Թորոսեան Սահակ Տապահ ապահովութեան  
11. Իսրայէլեան Ասրդիս Երեանի օգտակ. գիտել. տարած. ընկ.  
12. Լեռն Վարդապետ Գանձակի հայ հասարակութեան  
13. Խզմալեան Թաղէսոս Երեանի թեմի ծխական դպրոցների  
14. Լուսինեան Կարապետ Լադ. Շնիմ. և Պետեր. եկեղց. խորհրդէ  
15. Մալխասեան Ատ. Պօլսի ազգ. ժող. ուս. խորհր. և Տիխիսիսի  
Յովհաննեան դպրոցի  
16. Մահմուդրէկով Բագուի մահմենդականութեան  
17. Մանզակունի Գր. աւ. ք. Տիխիսիսի քահանայութեան  
18. Մելքոնեան Մարգիս Կովկասի հայոց բարեգործական ընկեր.  
19. Միլեան Արշակ Տիխիսիսի հայ վաճառականների  
20. Միրզայեան Մերովք Բագուի հայ լուսերականների  
21. Յովհանիսեան Յ. Բագուի քաղաքային ինքնավարութեան  
22. Նազարեան Տ. «Աղբիւր. Տարաղի»  
23. Ներսէս Վար. Տ. Միքայլ Ախալքիսայի վախանօրդութեան  
24. Զմէկեան Մակար Տէկիսիսի մեշտանների  
25. Զամալեան Արշակ «Հորիզոն»-ի  
26. Ռէիզեան Գէորդ Ե. Եախիջեանի թեմ. դպրոցի  
27. Տէր Ասատորեան Հայ աւետարանականների  
28. Տ. Գրիգորեան Ռուբէն Տիխիսարնակ վանեցիների  
29. Տ. Յակովբեան Յակովը Ագուլիսի դպրոցի  
30. Բաֆիի Արամ Լօնգոնի հայ գաղ. և միացեալ ընկեր.

Դժւար է մի առ մի թւել այն բոլոր ցանկութեւններն ու բարեմաղթւոթիւնները, որ արտայայտւեցան այդ օրը, մի-

ըան միայն նկատելի էր. կար մի ընդհանուր լուսաւոր կետ, դեպի սըը ուղղում էին ճառախօսներն իրենց հայեցքը—հայ ժողովրդի կրթութեան դաստիարակութեան, քաղաքակրթութեան և լուսաւորութեան ինդիքըն էր բոլորի մահոգութեան իենդընը կազմում: Հայ լուսերականը՝ աշխարհաբար աւետարանի փափակով, հայ ուսուցիչը իր բարենորոգւած, ապահովւած դպրոցների իզնով, հայ վաճառականը դպրոցական ֆոնդին սպասած լինելու ցանկութեամբ միմիայն մի նպատակ էին տեսնում՝ միջոց տալ հայ ժողովրդի բոլոր զաւակներին անխտիր հաղորդակից լինելու եւրոպական գիտութեան և ըուն աղքային կուլտուրայի բարիքներին:

Բարձր տրամադրութեամբ ու գոհ սրտով ցրւեցին հանգիսականները: Պատգամաւորները հօաւերւեցին նախաճաշի դպրոցի սենեակներից մէկում և քիչ ժամանակից յետոյ կազմ ու պատրաստ ու էջմիածին վերադառնալու՝ հրաժեշտի ողջոյն ուեցցին Մեծ Մարդի—ս. Մեսրոբի գերեզմանին: Նորին Սրբութիւնը շրախմով, ապա պատգամաւորներն, հանգիսականներն ու ուխտաւորները վերագրածան էջմիածին: ճանապարհն սորից կենդանութիւն ստացաւ, կառքեր—հանրակառքեր, փուրգօններ ու սայլեր, հետիւան և ձեւորներ բանեցին ճանապարհի ամբողջ երկարութեամբ և մատադ սրտերից գուրս թռչող ուրախ բացականչութիւնները մի անգամ ևս խանգարեցին պատմական առապարի հինաւուրց հանգստութիւնն ու անգարութիւնը: Երգ ու կանչով, խինդուկ, ծիծառ ծիծառ հանգիստամեսները, մանաւանդ աշակերտութիւնը, մտաւաղարշապատ գիւղը բաւական մթնով, երբ արդէն պատգամաւորները և հիւրերից սմանք պահ մի հանգստութիւն տւած իրենց խոնջացած մարմնին՝ իջել էին ճաշի վանքի սեղանատան գանգակի հրաւէրով: Պէտք է ասել, որ ճաշերն ու նախաճաշերն առհասարակ շատ ուրախ էին անցնում, շնորհիւգեղեցիկ բաժանածառերի և մտերիմ առ ու լիովի: Այդ օրն առաջարկւեցան հայ գրի ու զբականութեան, հայ մայրերի, հայ գերասանների, հայ տպագրութեան զարգացման ու առաջադիմութեան կենացները:

Նոյն օրը երեկոյեան գերապատիւ Տ. Կորապետ եպիսկոպոսը դաստիարակութեան մասին՝ կանգ առնում առաջամաւորներին և հիւրերին հայ գրականութեան մասին՝ կասդ առնելով առանձնապէս մեր թարգմանական գրականութեան վրայ<sup>\*</sup>: Մինչ նորակառոյց

\* Դաստիարակութիւնների վրայ կանգ չիմ առնում, որովհետեւ պէտք է տպագրեն Արարատի էջերում.

ժատենագարանի պատկերասրահում տեղի էր ունենում Տառապետ եղիսկոպոսի հետաքրքրական դասախոսութիւնը, դուրսը՝ վանքի քակում մի կատարեալ ժողովրդական հանգէս էր. գոյնզգոյն լազմերներով զարդարուն բակում զրունում էր խճագին բազմութիւն՝ մեծ հաճոյք զգալով շրջակայ գիւղերից եկած գեղջուկ-գեղջկուհիների շրջապարերով, որ «յամբատատան կերթայ ու կուգայ», և օգում, բարձրումը մերթ գեղարւեստական, մերթ խեղկատակ շարժումներ գործող հրթիւնների պայթիւնով: Ուշ գիշերը միայն կարող եղաւ ցըւել զեօնող հոծ բազմութիւնը և առժամ հանգիստ պարգևել վանքում ապրողներին այն պայմանով, որ հետեւալ օրը նորից տեղի ունենայ նոյն հըմւանքն ու զւարճութիւնը աւելի մեծ թափով, աւելի մեծ ուժով:

Կիրակի առաւտեան նորին Սրբութիւնը շրջապատւած շրախմբով իջաւ: Մայր Տաճար, երգում էր ձեմարանի քառաձայն խումբը և երգիչ պ. Տ. Նալբանդեանը: Պատարադից յետոյ կատարեց հայրապետական մազթանք և ապա նորին Վեհափառութիւնը, միաբանները և պատգամաւորները առաջնորդւեցին ձեմարան պատելու իրենց ներկայութեամբ Մեծ Յորելեանի առթիւ ձեմարանի հանգիստաբանում կազմած հանդիսին: Հանդեսը բաց արեց նորին Վեհափառութիւնը, ապա խօսեց ձեմարանի տեսուչ գեր. Բագրատ եպիսկոպոսը՝ ծանրանալով առանձնապէս ձեմարանի լուաբանական-մասնագիւտական բաժնի առանձնացնելու և ըստ ամենայնի իր կոչման բարձրութեանը հացցնելու վրայ: Ըստ հայր Տեղչի ձեմարանի լուաբանական բաժնը պէտք է դարձնել մի, եթէ կարելի է ասել, հայրապետական համալսարան, որտեղից աւարտող հայդէտները կարողանան պաշտպանել ու զարկ տալ բուն ազգային-հայկական կուլտուրային երկրի զանազան մասերում: Երկրորդ բանախօսութիւնը ձեմարանի ուսուցիչ պ. Գ. Ալթունեանին էր. ճառախօսը բացատրելով տօնի նշանակութիւնը, գրի ու տպագրութեան գերը պատմութեան մէջ՝ շեշտեց ազգային սեփական կուլտուրայի նշանակութիւնը մասնաւորապէս ազգի և ընդհանրապէս մարդկութեան օդակ տեսակէտից: Խօսեց նաև ձեմարանի ուսուցիչ բարձր. Մեսրոպ վարդապետ՝ նիւթ ունենալով բարբառների խնդերը Ե. դաշտում. զառախօսի կարծիքով պէտք է որ Ե. դարում բարբառներ գոյութիւն չունենային հայերի մէջ, գոնէ այդպէս թւում էր հայր դասախօսին: Մէջ ընդ մէջ արտասանւում էին ոտանաւորներ, քառաձայն խումբն էլ երգում էր ձեմարանի երաշտութեան ուսուցիչ պ. Ա. Տէր Յովսէփեանի զեկավարու-

թեամբ։ Առանձնապէս լաւ տպաւորութիւն թողեց ուտանաւորներից «Անգրագէտը» և երգերից «Անձրէն եկաւ» խմբերք ։ Փաղցը տպաւորութեամբ ցըւեցին հանդիսականները՝ ցանկանալով, անշուշտ, որ ձեմարանը դառնայ իրօք հայ բարձրագոյն դպրոց, լուսոց ջահ հայ կեանքում և լուսպւորէ մեր մութ ու խաւար անկիւնները։

Հետաքրքրութեամբ ոպասում էինք ճաշի ճրաւէրին, այդ օրը Նորին Վեհափառութիւնը պէտք է պատւէր իր ներկայութեամբ պատգամաւորներին և հիւրեւին, պէտք է տուաջարկեւին կենացներու բարեմազթութիւններ, պէտք է կարգացւէին սեղանատանը հոյ ժողովրդի հեռագրներով ուղարկած ջերմ բաղձանքներն ու չնորհաւորութիւնները։ Պատգամաւորներն ու հիւրեւն արդէն տեղաւորւել էին ոեղտնտանը, երբ ժամանեց Նորին Վեհափառութիւնը, հիւրեւը ոտքի կանգնեցին։ ապա սկսւեց սովորական ճաշը։ Առաջին բաժակաճառն արտասանեց Վեհափառ Հայրապետը, նա առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, որ ընդունւեց ուռայով հանդիսականների և առուստական ազգային հիմնել երեք անգամ նւագումով զինւորական երաժշտականը կողմից։ Երկրորդ բաժակն առաջարկեց Ալ։ Քալանթար Նորին Վեհափառութեան կենացը։ Երրորդ բաժակակն առաջարկեց Վեհափառ Կաթուղիութեամբ Կովկասի Փօխարքայ Կոմո Վորոնցով-Դաշկովի կենացը և ապա շարունակ առաջարկեցան ուրիշ կենացներ, որոնք սովորական են նման հանդիսաւոր ճաշկերոյթների ժամանակ։ Բաժակաճառերից յետոյ ալ։ Արամ Ռաֆֆին, և ալ. Սոտնիկեան կարգացին հեռագիրների մի մասը, իսկ միւս մասի համար յիշատակեցին, թէ որտեղից և ում կողմից են ուղարկւած։ Պ. Ռէիզեան կարգաց ն. Նախիջևանից ստացած հեռադրներից միայն մի քանիսը։ Գժւար է մի առ մի տալ հեռադրների բովանդակութիւնը։ մանաւանդ որ ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ինչ ցանկութիւններ կարող էր արտայայտել ժողովուրդը մի այդպիսի համազգային մեծ տօնի առիթով։ Կարելի է յիշատակել միայն, որ Խարբերդում, ինչպէս հեռագրում է բարձր։ Պակ վարդապետը, ճեմարտն են բացել Նորին Վեհափառութեան հովանաւորութեան տակ, Վեհնեայից էլ ցանկութիւն են յայտնել ճեմարտն ունենալու Հայաստանում։ Այստեղ կը բաւականանք առաջ բերել, թէ որտեղից և ում կողմից են տրւած հեռագրերը։

Հ Յ Ա Շ Խ Ա Ր Ա Ջ Ա Մ Ա Ր Ա Ր Ա

մասան՝ 15

Հ Ե Ռ Ա Գ Ր Ն Ե Ր

մասան՝ 16

### Ո՞րտեղից

### ումից

- |  |   |
|--|---|
| 1 Փարփղեց  | Պօղոս Նուպար փաշայից  |
| 2 կ. Պօլսից  | Պատրիարք. տեղապահից   |
| 3 կ. Պօլսից  | Ազգ. ժող. ատենապետ Տաղաւարեանից   |
| 4 կ. Պօլսից  | Յորել. յանձնաժ. նախ. Յ. Դիմաքսեանից   |
| 5 Էրզրումից  | առաջնորդ Սմբատ և պիսկոպոսից   |
| 6 Բրուսայից  | առաջնորդ Սահակ վարդապետից   |
| 7 Զմիւնայից  | առաջնորդարանից և յորելի անակ յանձնաժ.   |
| 8 Խարբերդից  | առաջնորդ Պատրիարքից   |
| 9 Օրդու (Սամսոնից)   | Թաղական խորհրդից  |
| 10 Ամասիայից   | առաջնորդից  |
| 11 Վանից   | Վարագայ հոգարածութիւնից   |
| 12 Դիարբեքիր   | Հայոց առաջնորդական փոխանորդից   |
| 13 Սամսոն  | Յորելի անակ յանձնախմբից   |
| 14 Այնթագ  | ըոլոր հայութիւնից նաև բժղոքականներից  |
| 15 Երզնկա  | հայ հասար. Մելքիսեդեկ վարդ. Հովենանից   |
| 16 Բիլէճիկ   | հայ հասարակ, առաջնորդական տեղապահ.  |
| 17 Խաչ Բողան (Վանի թագուրականի հայութիւն - Սովիակեանից թաղ.) | Վասպուրականի հայութիւն - Սովիակեանից թաղ.)  |
| 18 Սեբաստիայից   | Հայոց, Ամերիկական, կաթոլիկ, Սանասարեան դպրոց, որբանոց, երկու սեռի աշունեցող հաստատութեանց կողմից: |
| 19 Կոնիա   | առաջնորդ փոխանորդ Մովսէս քահանայից  |
| 20 Աղքիանապօլսից   | առաջնորդ Դուրեանից և ժողովրդից  |
| 21 Խարբերդ   | Պատրիարքի վարդապետից  |
| 22 Աղաղից  | թեմի կազմից փոխանորդի միջոցով   |
| 23 Վիեննայից   | Յորելի հնական Յանձնաժողովից   |
| 24 Դօչանից (Խորաս.)  | մի բուռն հայերից  |
| 25 Փարիզ   | Չողաննեանից   |
| 26 Բագու   | Վուամեանից ի դիմաց Վարագի հայ ժող.  |
| 27 Բոստոն  | ազգ. ուամկալաբներից   |
| 28 Փարիզ   | հայ համայնքից   |
| 29 Ֆիլիպօպոլի  | Գրասիրաց ընկերութիւնից  |
| 30 Թէհրան  | Հայ համայնքից   |
| 31 Թավրիզ  | Երեք դպրոց, մանկավարժակ, խորհուրդ.  |
| 32 Ամերիկա (Որչես.)  | Կենդրութական վարչութիւնից   |
| 33 Բոստոն  | Հայութիք թերթից   |

34 Բոստոն	ազգային ռամկավարներից Ամերկ. հայկ. ընդ. միւթ. քարտ. Քլոր-
35 Բոստոն	դեանից
36 Զիբուտիից (Եթով.)	Հայ գաղութից Արքերեանի միջոցով ազգ. կենտր. կոնս.
37 Գահիրէ	Միացեալ հայ կուսակցութեանց կողմից Յորելենական յանձնաժողովից.
38 Գահիրէ	Հոգաբարձութիւնից ի դիմաց հասարակ.
39 Մոռշչուկ	Մնացական Խունունցից
40 Մաշտ	Վրաց ազնւ. պարագլ. իշխան Սքամազից Յունաց դրամատիկական ընկերութեան
41 Ժենև	Դուկասեան պատմ. թանգարանի կոմիտեալի «Տիֆլիսակի Լիստոկ» ի խմբագրութիւնից ազգատ երեխայոց օգնող «Լոյս» ընկեր.
42 Տփխիս	Հայ կանանց «Մեղու» ընկերութեան Քահանայական ապահով. ընկերութեան
43 Տփխիս	Եկեղեցական խորհրդի
44 Տփխիս	Կուլտուրական միութեան
45 Տփխիս	Եկեղեցական հոգաբարձութեան
46 Տփխիս	Կուլտուրական միութեան
47 Տփխիս	Հայ կանանց «Մեղու» ընկերութեան Քահանայական ապահով. ընկերութեան
48 Տփխիս	Եկեղեցական խորհրդի
49 Պետերբուրգ	Կուլտուրական միութեան
50 Բագու	Եկեղեցական հոգաբարձութեան
51 Աստրախան	Կուլտուր. միութեան դպրոցակ. սեկցիայի
52 Բագու	Հայ կամաց համար. համալս. հայ ուսանող.
53 Օդեսսա	Հայ կրուժոկի
54 Պետերբուրգ	Հայ գրական գեղարւեստական ընկերութ.
55 Աստրախան	Նովորոսիյսկի կայս. համալս. հայ ուսանող.
56 Օդեսսա	Հայ ուսանողութիւնից
57 Կիև	Առևտրական ինստիտուտի հայ ուսանողութ.
58 Մոսկվա	Առևտրական ինստիտուտի հայ ուսանող.
59 Կիև	«Բագու» թերթի խմբագրութիւնից
60 Բագու	«Կասպիյ» թերթի խմբագրութիւնից
61 Բագու	Հայ հրատարակչական ընկերութեան
62 Բագու	Հայոց բարեգործական ընկերութեան
63 Եկատերինողար	Բարեգործական ընկերութեան վարչութ.
64 Եւպատորիա	Հայոց բարեգործական ընկերութեան
65 Ախալցխա	Բարեգործական ընկերութեան
66 Թելաւ	Բարեգործական ընկերութեան
67 Գօրի	Բարեգործական ընկերութեան
68 Աղնախ	Բարեգործական ընկերութեան
69 Հին-Ղրիմ	Բարեգործական ընկերութեան
70 Լագոդա	Բարեգործական ընկերութեան
71 Զալտըր	Բարեգործական ընկերութեան
72 Աստրախան	Հայ հոգևորականութիւնից
73 Գանձակ	Հայ հոգևորականութիւնից

- 74 Ելենովկա Սևանի միաբանութիւնից  
75 Ախալցիսա հոգեոր դասից  
76 Բաթալբաշնսկ մի խումբ քաղաքացիներից  
77 Արմաւիր քահանայութիւնից  
78 Տաթև հոգեոր կառավար, և վահան վարդապետից  
79 Գօրիս հայ հասարակութիւնից  
80 Ղաղախ եկեղեցու միաբանութիւնից  
81 Բաթում հոգաբարձութիւնից  
82 Տփխիս մեշչաններից  
83 Տփխիս Քաղաքային վարչութեան մասնակցողն.  
84 Ախալքալաք Յորելենական Յանձնաժող. և հոգաբարձ.  
85 Կաքաւարերդ Յորելենական Յանձնաժողովից  
86 Գօրիս Յորելենական Յանձնաժողովից  
87 Ղամարլու Զառղ ընկերութեան վարչութեան  
88 Մոսկվա Լազարեան ճեմ. ուսուցիչն., աշակերտ. և  
տօնի առթիւ հաւաքուած հիւրերից  
89 Տփխիս կանանց բարձր կուրս. դիրեկտոր պրոֆ.  
Բլագովիդովից  
90 Աստրախան հայոց դպրոցի ուսուցչութիւնից  
91 Բագու հայոց դպրոցներից  
92 Աստրախան Աղաբար, դպրոցի հոգ. և մանակավ. կազմ.  
93 Բաթում հայ կաթոլիկների դպրոցից  
94 Եկատերինոդար հայոց դպրոցի հոգաբ. և մանկավար. կազմ.  
95 Մոզդոկ հոգաբարձական և մանկավարժ. կազմերից  
96 Սպաղեան (Շամախի) Վանական «Բուդաղեան» դպրոցից  
97 Ղղլար հոգաբարձ. մանկավժ. կազմ. և աշակերտ.  
98 Ախալքալաք հոգաբարձական և մանկավարժ. կազմերից  
99 Հին Նախիջևան ծխական դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհին.  
100 Թէոդոսիա հայոց դպրոցից  
101 Ստաւրոպոլ հայոց դպրոցի հոգաբարձութիւնից  
102 Ստաւրոպոլ հայոց դպրոցի ուսուցչական խմբից  
103 Արմաւիր հայոց դպրոցի ուսուցչութիւնից և աշակերտ.  
104 Եւպատորիա հայոց դպրոցի հոգաբ. և ուսուցչ. կազմ.  
105 Թելաւ հայոց դպր. հոգբ. մանկ. կազ. և աշակերտ.  
106 Դերբենդ Եկեղեց. և դպրոցական հոգաբարձութիւն.  
107 Նուխի դպրոցի հոգաբարձ. և մանկավարժ. կազմ.  
108 Հին Ղրիմ հայ հասարակութ. և դպրոցի հոգաբարձ.  
109 Սղնախ հասարձ. հասար., հոգաբարձ. և մանկավարժ. կազմ.  
110 Արդահան բասխած հասար., հոգաբարձ. և մանկավարժ. կազմ.  
111 Գօրիս հոգաբ. մանկավարժ. կազմ. և աշակերտ.

- 112 Օրդուրադ Կաքաւաբերդի գալրոցի մանկավարժ, խմբ-  
հոգաբարձ. մանկավարժական կազմերից  
113 Իգղիր Դամարլուկ  
114 Ղամարլու Ղամարլուկ  
115 Սուրամ Հոգաբարձ  
116 Կվիրիլի Զիստի ըարեղ, ընկ, հոգ, ուսուց, աշ, կող.  
117 Կախաւան Գալրոցի հոգաբարձութիւնից  
118 Կախաւան Գալրոցի ուսուցչական խմբից  
119 Շրվանանց գիւղ Գալրոցի վարչութիւնից  
120 Քարվանսարա Գալրոցի հոգաբարձ. կազմերից  
121 Մեազոր (Զանդ, դ.) Պպրոցից  
122 Վարդաշէն Հազարարձ. և մանկավարժական կազմերից  
123 Շուլափէր Հայոց ծխական և տեղական գպրոց, կող.  
124 Բագու Խոգական գիննեազ. IV դաս. աշակերտուհին.  
125 Խարբին Հայերից  
126 Խարկով Հայ գաղութից  
127 Բելց Հայ համայնքից  
128 Վարոնեժ Հայ գաղութից  
129 Ստաւրոպոլ Ելուականներից  
130 Գեօրգիեվսկ Հայ գաղութից  
131 Տաշքենդ Հայ համայնքից  
132 Թէոդոսիա Տէր Վահանայից և նրա ծխական+  
133 Քութայիս Հայ համայնքից  
134 Արմաւիր Հասարակութեան կողմից  
135 Ալեքսանդրոպոլ Հայ կաթոլիկներից  
136 Ալեքսանդրոպոլ Հայ համայնքի և Խաչվանքեան քահ, կող.  
137 Հին Նախիջնեան Հայ համայնքից Միոն վարդապետի միջոց.  
138 Ախալցխա Հայ համայնքից Համար, միջ.  
139 Ախալքալաք Հայ համայնքից  
140 Արասթուման Հայ համայնքից  
141 Օլթի Հայ հասարակութիւնից  
142 Ռօմանովիլա Հայ գաղութից  
143 Կոկանդ Հայ հասարակութիւնից  
144 Օրդուրադ Մեղրիի դպրոցի և հասարակութեան կողմ.  
145 Երեան Բաշ-Գետնի գիւղի համայնքից  
146 Խանքենդքար Հայ հասարակութիւնից  
147 Շուլավերարձ Հայ հասարակութիւնից  
148 Զալաբ-օղլի Հայ հասարակութ. և գպրոցի հոգաբարձ.  
149 Ղզլարւատ Հայ համայնքից  
150 Եոր Նախիջնեան Քաղաքագլուխ Խաղանեանից  
151 Ռուստով Քարեգործ. ընկեր. նախագ. Զալիսուշեանից  
152 Եոր Նախիջնեան Պպրոցական ֆօնդի Յանձնաժողովից

- 153 Նոր Նախիջեան Թեմական դպր. հոգաբ. մանկ. կազմերից  
աշակերտութ. և հայ հասարակութիւնից
- 154 Նոր Նախիջեան Ալոյս Շաբաթաթերթից
- 155 » » » Ա. Խաչ վանքի Վանական Կառավարութ.
- 156 » » » Հոգևոր կառավար. և հոգևորականութիւն.
- 157 » » » կանանց որբախնամ ընկերութիւնից
- 158 » » » Արհեստաւորաց դպրոցի հոգաբարձութ.
- 159 » » » «Հայիգաբիմնան» դպ. հոգաբ. և մանկ. կազ.
- 160 » » » «Ա. Սանդղանեան» դպ. հոգ. և մանկ. կազ.
- 161 » » » «Ա. Համբարձման» դպ. հոգ. և մանկ. կազ.
- 162 » » » «Ա. Թէոդորոսի» դպր. հոգ. և մանկ. կազ.
- 163 » » » փոխադարձ վարկի ծառայողներից
- 164 » » » բժշկապետ պ. Յակոբ Միրզայեանից
- 165 » » » պ. Փիլիպոս Վարդանեանից
- 166 » » » բարձր. Վահան վարդապետից
- 167 » » » բժիշկ Անդրէաս Սալտիկեանից
- 168 » » » Մինաս Բալաբանեանից
- 169 Մոստով Յովհաննէս Շապոչիկեանից
- 170 Նոր Նախիջեան Յ. Խաթրանեանից և Կ. Խօջայեանից
- 171 » » » երեցիոլս Զուգոյեանից
- 172 » » » Մարկոս Խոկանդարեան
- 173 Մոստով Սոլոմոնիանից
- 174 Չալտըր Յ. Քրիստոստուրեան և Գ. Բարդողչեան  
քահանայից
- 175 Մոստով «Իզմիրլեան» Ընկերութիւնից
- 176 » » » բարեգ. Ծնկերութ. վարչութ. Նախագահից
- 177 Տփխիս առաջնորդ գեր. Մեսրոպ Եպիսկոպոսից
- 178 Քիչնե Բհսարաբիայի թեմ. առաջ. և մի քանի անձ.
- 179 Բագու առաջնորդ Անանիա Եպիսկոպուսից
- 180 Շուշի Թեմի կառավարիչ Տ. Զավէն վարդապետից
- 181 Երեան Եահանդապետ զրաֆ Տիգենհառուդէնից
- 182 Տփխիս Քաղաքադլուխ Խատիսեանից
- 183 Շուշի Քաղաքադլուխ Քալանթարեանից
- 184 Ալէքսանդրոպոլ Քաղաքադլուխ Կամսարականից և հասարկ.
- 185 Երեան Մելիք Օհանջանեանից
- 186 Թարթառ իրան Սպնախսկիից
- 187 Պետերբուրգ պրօֆ. Վարդանեանից
- 188 Կիև պրօֆ. Սոզոմոն Եղիազարեանից
- 189 Մոսկա Ալէքսանդր Տարասովից
- 190 Տփխիս Մաման Յարութիւնեանից
- 191 Տփխիս մայրապետ Թայիրեանից

192 Տփխիս	բժշկապետ Նաւասարդեանից
193 Ալէքսանդրապոլ	Լեռն Սարգսեանից
194 Բագու	Տիգրան Յովհաննիսեանից
195 Տփխիս	Յովհաննէս Սպենդիարեանից
196 Տփխիս	Յովհաննէս Թումանեանից
197 Տփխիս	Յովհաննէս Տէր Միրաքեանից
198 Մոսկվա	Յովհաննէս Բալեանից
199 Տփխիս	Լեռն Մելիքսէթքեանից
200 Երևան	իրաւաբան Պետրոսեանից
201 Արմաւիր	Զաւադ բէկ Բալուղեանից
202 Բագու	մի խմբից-Յակոբյանեան, Յակոբեան և այլն-
203 Մոսկվա	դերասան Շահիսաթունուց
204 Բագու	Խօջամիրեանից
205 Տփխիս	Շամշինեանից
206 Կիե	Յովհաննէս Յարութիւնեանից
207 Ալլահվերդի	Արշակ Բարեանից
208 Մոսկվա	Բժիշկ Ա. Շահնազարեանից
209 Եարամլաւ	մի խումբ ուսանողներից
210 Սղնախ	Հայոց դպրոցի ուսուցչունուց
211 Սղնախ	մի խումբ հայուհիներից
212 Տփխիս	Կալդին ճարտարապետից
213 Արմաւիր	Ֆեթվաջեանից
214 Ալէքսանդրոպոլ	Խալաթեան քահանայից
215 Իգդիր	Բայազետի գործակալ Տէր Ներսէս քահ-
216 Արդւին	բարեկարգիչ Տէր Գրիգոր քահանայից
217 Թառթառ	Գէորգ Մուրադեանից
218 Մերգ	Մելիկսէթեկ Տէր Յակոբեանից
219 Տաչքենդ	Տէր Մարկոս քահանայից
220 Բանորաշէն	գործակալ Կարապետ Շահնազարեանից
221 Գօնչեգիտ	Երեցփոխ Գրիգորեանից և Արքահամ. քհ.
222 Գօրի	Արգար Բարամեանից
223 Իւզովկա	Դաւթեան քահանայից
224 Արմաւիր	Ասլանեանից, Ազիզքէկեանից և Տ. Աւետ.
225 Գօրիս	«Սասուն» տպարանատէրերից
226 Գօրիս	թղթակիցներ Սազանդարեան և Պարօնեան
227 Գրակալա	Գօրու Հայոց դպրոցի դասատուներից
228 Գանձակ	բանտարկեալների կողմից Խօջայեան քահ-
229 Իգդիր	մի խմբից
230 Իզմայլով	մի խումբ հայերից
231 Իգդիր	մի խումբ Իգդիրմաւեցիներից

Այս հեռագրերից մի երկու ուր զբամբական նւէրի լուր են տալիս յօդուտ դպրոցական ֆօնդիս այսպէս օրինակ նոր նախիջեանի ո. Խաչ վանքի կառավարութիւնը 5000 ռուբլի է յատկացնում դպրոցական ֆօնդին, որից 1000 ռուբլին ուղարկում է հեռագրեր հետ, իսկ մնացածը թողնում է ուղարկելու յետոյ, հայր Վահան վարդապետը գարձեալ նոր նախիջեանից ուղարկում է 100 ռուբլի և այլն հեռագրների թեթև կերպով աշքի անցնելը բաւական է պարզելու համար մեղ, որ աշխարհիս դանական կողմերը ցրւած հայերը—բոստոնից Զիրուտի, Լոնդոնից Թէհրան, Փարիզից Երզրում—զգալով աօնի վեհութիւնն ու վսեմութիւնը՝ աշխատել են միանալ Կենդրունում գտնւողների հետ իրենց ցանկութիւններով, շնորհաւութիւններով ու բարեմաղթութիւններով։ Կարելի է համարձակ ասել, որ իրօք այս Մեծ Յորելեանի տօնակատարութիւնը համագույն ընոյթ էր կը ունի:

Հեռագրների ընթերցումից և յիշատակութիւնից յետոյ, երեկոյեան ժամը 9.-ին, բոլոր պատգամաւորները գնացին Վեհարան, ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին և յայտնեցին իրենց շնորհակալութիւնը նորին Սրբութեանը Համագդային Մեծ Յորելեանի տօնը ո. Էջմիածնում կազմակերպելու և իրենց պատգամաւորներին ցոյց տւած հիւրասիրութեան համար։ Վեհափառը ընդունեց պատգամաւորների շնորհակալութիւնը, օրհնեց բոլորին և յայտնեց, որ համաձայն պատգամաւորների ճաշի ժամանակ արտայայտած ցանկութեան՝ խորին հպատակութեան հեռագիր է ուղարկել ն. Մ. Թագաւոր Կայսրին և Կովկասի Տ. Փոխարքային։ Պատգամաւորները շնորհակալութիւն յայտնելով այդ առթիւ ևս և որդիկական հրաժեշտ առաջ Վեհափառ Հայրապետին՝ իջան և քիչ յետոյ գնացին ձեմարանի հանդիսաբան՝ լսելու Տ. Գարեգին վարդապետի գաւախիսութիւնը—«Գըչութեան արւեստը հայոց մէջ»։ Հայր գաւախիսութիւնը բացատրելով հնագրութեան արժեքը, ուսպէս գետութեան, անցաւ մի առ մի նիւթի (պապիրոս, մադաղաթ, թուղթ, թանաք և այլն), գըշելու գործողութեան, կազմի և պահպանութեան, մատենադարանների, ստացողների և հովանականութիւնների, գըչութեան դպրոցների պատմութեանը և վերջացրեց հայ գըի դարդացման աստիճանների ու տեսակների գարգացման յիշատակութեամբ։ Պասախօսութեան ընթացքում ցոյց էր տալիս մօգական լապտերով գըի տեսակներ, գեղեցիկ գըչութեան օրինակներ և շքեղ ու զարդարուն կազմեր։ Պասախօսութիւնը լաւ տպաւորութիւն թողեց հանգիստականների վրայ, հետաքրքրական էին նաև մողական լապտերում գոյացութիւնը և առաջարկութիւնը կազմելու համար։ Հայ գըի դարդացման աստիճանների ու տեսակների գարգացման յիշատակութեամբ։ Պասախօսութեան ընթացքում ցոյց էր տալիս մօգական լապտերով գըի տեսակներ, գեղեցիկ գըչութեան օրինակներ և շքեղ ու զարդարուն կազմեր։ Պասախօսութիւնը լաւ տպաւորութիւն թողեց հանգիստականների վրայ, հետաքրքրական էին նաև մողական լապ-

տերով ցոյց տրւած նկազները։ Դասախօսութեան ընդմիջումին երդեց երգիչ պ. նալբանդեան հանդիսականների բռւռն խնդրանոք և տիկ։ Գարագաշի դաշնամուրի նւագակցութեամբ, ինչպէս որ տեղի էր ունեցել նախորդ երեկոյեան, Տ. Կարապետ եպիսկոպոսի դասախօսութեան ժամանակ, Երկուսն էլ վարձատրւեցին ծափահարութիւններով։ Բաւական ուշ ցրւեցին պատգամաւորները և հերերը և հետեւեալ օրը, Երկուշարթի առաւտեան, Նրանցից շատերը չկային այլ ես, հեռացել էին ո. Էջմիածնից՝ տանելսվ իրենց հետ քաղցր յիշողութեւններ։  
Երկու շաբթի օրն արգէն տօնի տպաւորութիւն չեր թողանում, էլ Յորելեանական օր չեր, այլ «օր ուղղագրութեան» հայոց լեզւի։ Մնացած ստկաւաթիւ պատգամաւորների, լեզւական—ուղղագրուական հարցով հետաքրքրուող ինտելլիգենտ հիւրերի, գլուխորապէս ուսուցիչ ուսուցչուհիների և ձեմաքանի բարձր դասարանի ու լուսանցիների ներկայութեամբ ձեմարանի ուսուցիչ պ. Արեգեանը դասախօսեց հայ լեզւի ուղղագրութեան մասին։ Դասախօսը ցոյց տալով մի ընդհանուր ուղղագրութիւն ունենալու անհրաժեշտութիւնը արևելքան և արևմտեան հայերի մէջ՝ կանդ առաւ ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու խնդրի վրայ և մանրամասն կերպով յիշատակեց, թէ ինչ փոփոխութիւններ կարելի է մտցնել ուղղագրութեան մէջ, որ բառերի պատկերներն առանապահան հասարակ աննշան փոփոխութիւն կը են և ընդունւեն եթէ ոչ ըոլորի, գոնէ գրագէտների մէծ մասի կողմէց։ Ուղղագրութեան հարցը շատ փափուկ խնդիր է և մանրակրկիտ պարզաբնութեան կարօտ։ Եթէ ժամանակներին ուշ չլինէր, անշուշտ տեղի կաւճենային հետաքրքրական վիճաբանութիւններ։ բայց դժբախտաբար այնքան ուշ էր, որ ոչ պ. Ա. Մալխատեանի դասախօսութիւնը տեղի ունեցաւ նոյն խնդրի շուրջը և ոչ եւ կարդացւեցին ուրիշ հայագէտների, և միջի այլոց Մեյլի և Մառի զէկուցումները կամ կարծիքներն այդ խնդրի մասին։ Դասախօսութիւնից յետոյ մի խորհրդակցութիւն եղաւ ձեմարանի ուսուցիչ պ. Ա. Կանայեանի նախագահութեամբ և փորձ եղաւ որոշ եղբակացութեան գալու հայ ուղղագրութեան վիճակը որոշելու նկատմամբ, բայց սակաւ թեր և զէմ կարծիքներից յետոյ որոշեց թողնել այդ խնդրը երեկոյեան մի ներշնչանի—հայագէտների և հայագիտութեամբ զբաղւող ների—խորհրդակցութեան։ Ինչպէս լուսում է, երեկոյեան խորհրդակցական ժողովը որոշելէ զիմել Ա. հափառ Հայքապէտին, հրաւերել ո. Էջմիածնի հայագէտների դանաղան կողմէցից, որոնք և իր լուծեն այդ ժանր խնդիրը։



Ա Ն Գ Ե Ր Ճ Ա Կ Ի Ր.

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Տ Է Ր

Լազարեան ծեմարանն արենլեան լեզուաց որպէս մեր ժամանակի հնագոյն կրթական հիմնարկութիւն Հայոց մէջ, պարագ է համարում ողջունել Զերդ Սրբութիւնը և ի դէմս Զեր ամբողջ հայ աղքին տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի նշանաւոր օրին:

Մասնակցել լուսաւորութեան այդ մեծ տօնին՝ նշանակում է ճանաչել ս. Սահակի և ս. Մեսրոպ Մաշտոցի երախափքը ազգի և մարդկութեան առաջ Պարտքի և գաղափարի այդ առաքեալները, տալով ազգին գիր ու դպրութիւն, հազորդակից արին նրան աւելի վսեմ քաղաքակրթութեան քրիստոնէական եկեղեցու հովանու տակ: Մեսրոպեան գիւտը բացեց հայի գարերով կապուած լեզուն, արթնացրեց նրա ստեղծագործական ուժերը:

Այս վսեմ գործին պսակ հանդիսացաւ ՏՎԻ գարում հայ տպագրութեան արուեստը, որ միջոց տուեց ժողովրդի լայն խաւերին հաղորդ լինելու գիտութեան, դրականութեան և գեղարուեստի բարիքներին:

Հանդէս եկաւ մի փայլուն կաճառ մատենագիրների, որոնք ճոխացրին մայրենի լեզուն և զրականութիւնը: Մեսրոպեան սքանչելի գիւտը հնարաւորութիւն տուեց հայ ազգին կատարել մի վեհ առաքելութիւն՝ քաղաքակրթութեան և քրիստոնէական լուսոյ հաղորդիչ հանդիսանալ առաջաւոր Ասիայում:

Պահպանելով իր մեծ հիմնադիրների աւանդներն և աշխատելով հայ ազգի լուսաւորութեան նոյն անդաստանում, լազարեան ծեմարանն իր այդ սպասաւորութեամբ հանդիսանում է իրքեւ շաբունակող այն մշակների գործի, որոնք 1500 տարի առաջ վառեցին Հայոց մէջ Սրբազն հուրը, իսկ ՏՎԻ գարում նոյնը փայլեցրին հայ ժողովրդի բոլոր շրջաններում:

Այս գիտակցութեամբ լազարեան ծեմարանը այն նշանաւոր տօնին միացնում է իր ձայնը հոչակելու որպէս ս. Սահակի և ս. Մասրոպի նոյնական առաջին հայ տպագրիչների վաստակները եկեղեցու և զրականութեան առաջ և մաղթում հայ ազգին լիակատար արտայայտութիւն իր հողերը ոյժերի և բարգաւաճում իր ապաղայ քաղաքակրթական աշխատանքի մէջ:

Վերատեսուչ Պաւել Գիլուլիանով.

Տեսուչ Կ. Կոստանեանց

№ 2622

ի 5 հոկտեմբերի 1913 ամի.

ի Մոսկով:

Վ. Ե. Հ. Ա. Փ. Ա. Ռ. Տ. Է. Բ.

Յարգելի նանդիսականներ,

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը քաղցր պարտականութիւն է դրել խորհրդի անդամներ՝ պ. Կ. Խալաթեանի և ինձ վրայ այսօր Համազգային այս Մեծ Յորելեանի օրը, թարգման լինել Ընկերութեան և նրա 62 ծիւղերի այն նուիրական զգացմունքների, որ տածում է Ընկերութիւնը Հայ ժողովրդի քաղաքակրթութեան այս Մեծ տօնին:

Հայկական տառերի դիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը ոչ միայն Հայկական տօն պէտք է համարել, այլ և համամարգկային, քանի որ տառերի դիւտի շնորհիւ քրիստոնէութիւնը խոր արմատ ձգելով արհելքի մի անկիւնում—Հայաստանում, Հայ ժողովուրդը միջոց ունեցաւ ազնիւ գաղափարների քարոզիչ դառնալ իրան շրջապատող ազգերի մէջ, որով սկսեց քաղաքակրթութեան (զարգացման) համար հող պատրաստել Նոյն գերը Հայ ժողովուրդը կատարում է և այսօր, որի համար նա թէ հնում և թէ այժմ տուել է և տալիս է բազմաթիւ զոհեր:

Սակայն արենելքում մեր նախնիքների կատարած այդ մեծ դերը մեզ չպէտք է շլացնէ և մոռացնել տայ, որ մենք չենք կարողացնել հարկաւոր չափով օդուուել ո. Մեսրոպի այն Մեծ դիւտից, որի 1500-ամեակը տօնելու զանազան տեղերից ժողովել ենք այսակ, ո. Մեսրոպի գերեզմանից ոչ այնքան հեռու:

Ե՞նչ ենք արել մենք զրագիտութիւնը Հայ ժողովրդի մէջ լայն չափով տարածելու համար, որով արժանավայել կերպով իրագործած լինէինք ո. Մեսրոպի մեզ թողած աւանդը, եթէ չասենք՝ ոչինչ, համարձակ կարող ենք ասել, որ չատ քիչ ենք արել:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը 1908 թուին, երբ նա վերակազմնեց, կամենալով ի մօտոյ ծանօթանալ Հայ զրագիտութեան չափի և մեր եկեղեցական-ծխական դպրոցների հետ տեղեկութիւններ ժողովեց, որից երեաց՝ որ կան ամբողջ հայաքնակ շրջաններ, ուր 20-25 հայ գիւղերից հազիւ 2-3-ի մէջ կան ծխական դպրոցներ՝ շրջաններ՝ 40-50 հայաքնակ գիւղերով, որոնցից միայն 5-6 գիւղի մէջ կան ծխական միադասեան դպրոցներ, այն ևս ոչ բարեկարգ զրութեան մէջ զբուած. այսպիսով ընդհանուր պատկերն այն էր, որ Կովկասի հայերի մէջ զրագիտութիւնը

նչ միայն բաւարար դրութեան մէջ չէ, այլ շատ անմիխթար դրութեան մէջ է գտնւում։ Գրագէտների թիւը  $0|_0^0$ -ի վերածելով՝ երեսց, որ արական սեռի մէջ հազիւ 4-5  $0|_0^0$ -ը է միայն գրագէտ, իսկ իգական սեռի մէջ՝ 2-3  $0|_0^0$ -ը։ Ահա այս էր հայի գրագիտութեան իսկական պատկերը 1908 թուին եւ այսօր, որ 5 տարի է միայն անցել այդ թուականից, ինչ խօսք՝ որ զդալի փոփոխութիւն լինել չէր կարող։ Այդ էր պատճառը, որ Կ. Յ. Բ. Ընկերութիւնն իւր գործունէութեան գլխաւոր ուշադրութիւնը դարձրեց Հայ ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածելու գործին, այդ նպատակով Ընկերութիւնը գրամական օժանդակութիւնը է տալիս մեր եկեղեցական-ծխական դպրոցներին և նպաստում է օգնութեան կարօտ հայ ուսուցիչ ուսուցչուններին իր հիմնած ուսուցչական ֆօնդից։

Կ. Յ. Բ. Ընկերութիւնը ահանելով իր վերոյիշեալ փայփայած գաղափարի լայն իրագործումը, այսօր գալիս է լիարերան և սրտաբուզիս կերպով իւր չնորհաւորութիւնները յայտնելու Չեզ, ՎեչԱՓԱՄ Տէր, և ու էջմիածնի միաբանութեան այն ազդօգուտ գործի համար, որ Համազգային այս Մեծ տօնը յաւերժացնելու համար ձեռնարկել էր, այն է կազմել «գպրոցական ֆանդ» եղած կարօտ Հայ եկեղեցական-ծխական դպրոցներին օգնելու նիւթականապէս և նորերը բանալու նպատակով։

Հաւատացած եղէք, ՎեչԱՓԱՄ Տէր, որ Հայ ժողովուրդն իւր առատաձեռն նուէրներով կաջակցէ Չեզ իրագործած տեսնել այդ վեհ ձեռնարկութիւնը, որը պէտք է նրա ապագայ մարդավայել գոյութեան հիմքը կազմէ։

Սարգիս Մելիքումեան։

### ՎԵՉԱՓԱՄ ՏԷՐ

Հայ գրերի դիւտը և տպագրութեան սկզբնաւորութիւնը մի մի լուսաւոր գրագորէիններ են հայ ժողովրդի պատմութեան մէջ։ Հայ գրի և տպագրութեան ազդեցութիւնը հայ ժողովրդի քաղաքակրթութեան վրայ եղել է հակայական։ Ծնորհիւ գրի ու տպագրութեան մննը ժառանգել ենք նախորդ սերունդներից մեր ամբողջ մատառը հարատութիւնը և եթէ իրողութիւն է ներկայութա, որ հայ ժողովրդի մէջ կայ քաղաքակրթուելու և առաջազիմելու անհուն տեսչ, դրանով մենք պարտական ենք քաղաքակրթութեան այն միծ Փակտօրներին, որոնց նուիրած են այսօրուայ տօնական հանդեսները։ Վերապրելով հայ ժողովրդի հետ միասին մեր պատ-

մական ու լուսաւոր մոմեաները, Անդրկովկասի Հայուհեաց Որբախնամ ընկերութեան վարչութիւնը խորին երախտագիտութեան զգացմունքներով կանգ է առնում մեր ինկելի նախահայրերի անմոռաց անունների վրայ և ողջունում է ու չնորհաւորում Զերդ վեհափառութեան Հայ ժողովրդի այս Մեծ տօնը,

Նորին Արքուրեան Տ. Տ. Գէմիթ Ե. Արքագնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց Վեհապատճեն Ա. Փ. Ա. Փ. Ա. Սէր.

Թիֆլիսի Հայ վաճառականութիւնը, որ հանդիսանում է կովկասի Հայ առետրական աշխարհի մէջ աւագագոյն անդամ իր բազմութեամբ և հնութեամբ, չէր կարող անտարբեր մնալ գէպի այն կոչը, որ Զեր Վեհափառութիւնը բարեհածել էր անել իրան, հրաւիրելով, իրեն Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հարազատ դաւակ և իրեն Հայ ժողովրդի մի ստուար դասակարգ, մասնակցել Հայ գրերի գիւտի 1500-ամեակի և Հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ փառաւոր Յորելեանին, որի տօնախմբութիւնը կատարում է այսօր ս. Էջմիածնում։ Իրեն Համազգային հանդէս Զեր Վեհափառութեան նախագահութեան ներքոյ։

Վաճառականութիւնը ամենամեծ պատրաստականութեամբ և համակրութեամբ ընդունեց իրան արած այդ մեծ պատիւը, նախ իրեն հարազատ զաւակ Մայրենի եկեղեցւոյ, երկրորդ ի նկատի ունենալով, որ ներկայ Յորելեանը մինն է այն գիւղնագիւտ յորբելեաններից, որոնց կընախանձէին շատ աւելի մեծ ազգեր, որովհետեւ քիչ ազգեր կարող են պարծենալ պատմական այնքան խոր հնութիւն ունեցող փառապանծ ակտով, որպիսին հանդիսանում է գրերի գիւտը 1500 տարի առաջ իրեն ապացոյց Հայ ժողովրդի քաղաքականութեան խորին հնութեան։

Բայց Հայ վաճառականութիւնն ունէր և մի ուրիշ զրդիչ պատճառ մասնակցելու այս Մեծ Յորելեանին, վերյիշելու համար պատմական այն անհերքելի փաստը, որ եթէ Հայ գրերի գիւտը կատարուեց Հայոց եկեղեցւոյ անմահ ներկայացուցիչների ջանքերով և աշխատութեամբ, Հայ տպագրութիւնը, իրեն ոչ պակաս կարեոր գործօն Հայ ազգի քաղաքակրթութեան, իր ծագումը և զարգացումը պարտական է մեծ չափով նաև Հայ առետրական դասի ներ-

